ContourGlobal

ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2

Հայտերի գնահատման նիստի

Շամբ ՀԷԿ-ի աստիճանավանդակների վերանորոգման աշխատանքների համար
վերջնական գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 03/26**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2026-2028թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. ապրիլի 20-ին, Ժամը՝ 16:20-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝	Աշոտ Քոչարյան Արտաշես Գրիգորյան Զարուհի Խաչատրյան Սևակ Սուրենյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված տեխնիկական առաջարկներին և համաձայն մրցութային փաթեթի 6.3 կետի պահանջների առաջարկել էր մինչև 2026թ ապրիլի 1-ը պահանջել բոլոր հինգ կազմակերպությունից պարզաբանել և լրացնել հայտում ներկայացված տեղեկատվությունը և ստացված պարզաբանումների արդյունքում հանձնաժողովը հայտերը վերջնական գնահատել է հետևյալ կերպ.
2. Գնահատող հանձնաժողովը ստացված հայտերի ուսումնասիրության ընթացքում արձանագրել է, որ «123» ՍՊԸ-ը ներկայացրել է առաջարկություն՝ տեխնիկական

բնութագրից շեղվելու վերաբերյալ: Առաջարկությունը ուսումնասիրության ընթացքում հանձնաժողովը արձանագրեց, որ տեխնիկական բնութագրից շեղվելու վերաբերյալ առաջարկը ընդունելի չէ, քանի որ պողպատը ավելացնում է համակարգի հաստությունը, բերում է ավելորդ ծախս և կարող է ստեղծել կոռոզիոն ռիսկեր: Իսկ տեղադրվող կոնստրուկցիան ամրացվելու է բետոնե պատի վրա, պողպատը տեխնիկապես պարտադիր չէ և աշխատանքները պետք է իրականացվեն ըստ ծավալաթերթի պահանջների:

Իսկ «Գուրոս» ՍՊԸ-ն չի ներկայացրել պահանջված տեղեկատվությունը: Ինչպես նշեց հանձնաժողովը, կազմակերպությունը չի բավարարում պահանջվող որակավորման չափանիշներին՝ վերջին 5 (հինգ) տարիների միջին տարեկան հասույթի և նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասով: Ուստի հայտը մերժվում է և չի դիտարկվելու ֆինանսական առաջարկների բացման փուլում: «Սմարթտեխ» ՍՊԸ-ին ուղղված պարզաբանման/լրացման պահանջի շրջանակում պահանջվել է ներկայացնել շինարարության իրականացման լիցենզիա՝ ներառյալ «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ենթաբաժինները: Կազմակերպությունը ներկայացրել է «Ջրամատակարարում և ջրահեռացում» լիցենզիա, որը, գնահատող հանձնաժողովի արձանագրմամբ, չի համապատասխանում սահմանված պահանջներին: Արդյունքում հայտը մերժվում է և չի դիտարկվելու ֆինանսական առաջարկների բացման փուլում:

3. Ներկայացված «Պրեստոր» ՍՊԸ-ի, «Պրոմ Ստրոյ» ՍՊԸ-ի և «123» ՍՊԸ-ի կազմակերպությունների կողմից հայտերը բավարարում են մրցութային փաթեթի որակավորման պահանջներին և չափանիշներին: Մասնավորապես. հայտատուները ներկայացրել են բոլոր պահանջվող վավեր լիցենզիաները իսկ հայտատուների վերջին տարվա սեփական կապիտալը դրական է, վերջին 5 (հինգ) տարիների միջին տարեկան հասույթը (շրջանառությունը) գերազանցում է 120,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ, ինչպես նաև ներկայացվել է մեկ պայմանագիր, ոչ պակաս քան 60,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի հետ կապված:
4. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ երեք հայտերը բավարարում են որակավորման չափանիշներին և տեխնիկական պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը առաջարկեց բացել ֆինանսական առաջարկները առցանց Կուպա համակարգում ս.թ. ապրիլի 3-ին:
5. Ֆինանսական հայտերը բացվեցին ս.թ. ապրիլի 3-ին ժամը 14:05: Coupa համակարգում առցանց բացվեցին հայտատուների կողմից ներկայացված առաջարկները, և արձանագրվեց հետևյալ արդյունքները՝

N	Մասնակից	ՀՀ դրամ, առանց ԱԱՀ
1	«Պրոմ Ստրոյ» ՍՊԸ	54,058,806
2	«123» ՍՊԸ	56,246,594
3	«Պրեստոր» ՍՊԸ	58,166,667

6. Գնահատող հանձնաժողովը, ծանոթանալով գնային առաջարկներին, նշեց, որ նախահաշվային արժեքը կազմում է 59,993,252 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Հաշվի առնելով ստացված արդյունքները և կատարվելիք աշխատանքների յուրահատկությունները՝ որոշվեց աճուրդ չիրականացնել, քանի որ նվազագույն առաջարկված գինը նախահաշվային արժեքից ցածր է 9.9%-ով: Հանձնաժողովը առաջարկեց հաղթող ճանաչել նվազագույն գին առաջարկած «Պրոմ Ստրոյ» ՍՊԸ-ին՝ 54,058,806 (հիսուն չորս միլիոն հիսուն ութ հազար ութ հարյուր վեց) ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ: Պայմանագրի շնորհումը կատարել կազմակերպության բոլոր հաստատումները անցնելուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	
	Աշոտ Քոչարյան	
	Արտաշես Գրիգորյան	
	Զարուհի Խաչատրյան	
	Սևակ Սուրենյան	
	Արմինե Մանուկյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	